անգամ վկայում է այն մասին, որ <<գնման առարկայի բնութագիր>> և <<որակավորման չափանիշ>> հաստակացությունները չեն կարող նույնացվել, ուստի Հայցվորի վերոնշյալ փաստարկներն անհիմն են:

Ինչ վերաբերում է հայցադիմումում առկա մյուս փաստարկներին, ապա դրանք ամբողջությամբ հերքվում են Դատարանի վերոշարադրյալ իրավական վերլուծությունների հիման վրա արված եզրահանգումներով:

Հետևաբար, Դատարանը, արձանագրելով, որ հայցվորի ներկայացուցչի հայցադիմումում ներկայացված փաստարկներն ամբողջությամբ հերքվում են Դատարանի վերոշարադրյալ իրավական վերլուծությունների հիման վրա արված եզրահանգումներով, գտնում է, որ պատասխանողի կողմից ապացուցվել է վիճարկվող գործողության հիմքում ընկած հանգամանքները, ինչպես նաև տվյալ գործողության կատարման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերը, ուստի հայցը ենթակա է մերժման:

6. Դատական ծախսեր.

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմումը դատարան ներկայացնելիս վճարել է օրենքով նախատեսված պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է մերժման, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ստատուս թրեյդինգ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ պաշպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար լաբորատոր ազդանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-9/17» ծածկագրով գնանշման հարցման հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Ճիլաջյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am